Պանդատարիա կղզին, իւր տալօշն ի Պոնտիա կղզին, եւ իւր բաժանումն զաւակներէն, որոց խնամակալ կ'անուանէր Դոմիտիանոս ինք զինքն։

— Ո՛վ Յիսուս, ամէնողո՛րմ փրկիչ, աղաղակեց՝ երբ մեկնելու ժամանակ իմացաւ այս կսկծեցուցիչ լուրը. քու բարութիւնդ մարդոց չարիքէն մեծ է։ Անկարելի է, ո՛վ Տէր, որ դու մերժես վկայի մը և մօր մ'աղաչանքը, և թէ օր մը չի դարձնես ինձ որդիքս՝ զորս քեզ կը յանձնեմ։

Իւր տալօշ հետ վերջին ակնարկ մը ձգեց այն տան վրայ, ուր այնքան երջանիկ ներս մտած էր և ուսկից առանց որդւոցը դուրս կ'ելնէր։ Յետոյ լռութեամբ իւր ծառայից ձեռքը սեղմեց և զինքը տանող կառքին մտեցաւ։ Նոյն վայրկենին մարդ մը պատատուած կրկնոցի մը մէջ, որ կը ծածկէր իւր դէմքը, մերձեցաւ, և կտաւակ մը նորա ձեռաց մէջ դնելով՝ ըսաւ.

— Իւր վախճանն փառաւոր եղաւ. նա մեռաւ՝ զԲարձրեալն օրհնելով։

Դոմիտիլլա գիտեց վկային արեան մէջ թաթախուած թանկագին նշխարը. յետոյ խանդաղատանաց և յարգանաց ձևով մի իւր սրտին վրայ սեղմեց զայն։ Եւ աչքերը վերցընելով զայն բերդին վրայ,

— Օրհնեա՛լ ըլլաս, վեհանձն մարդ, ըսաւ, ճանաչելով զսուսերամարտն Պարիս։

Յետոյ վրայ բերաւ, իբր թէ ինքն իրեն խօսէր.

— Իւր մարմինն ձգուած է տանջանաց մէջ. եւ այս գիշեր՝ երբ ես մեկնիմ Հռովմէն, Տիբերի մէջ պիտի նետուի։

— Այս գիշեր Փլաւիոս հիւպատոսն կամ քրիստոնէական գերեզման մը պիտի ունենայ և կամ Պարիս պիտի մեռնի, պատասխանեց սուսերամարտն։

Վշտահար կանայք կառք նստան. և վերջին անգամ մ'այլ ողջունելով այն տունն՝ յորում մին ծնած էր և միւսն կը թողուր իւր աղայքը, միմեանց ձեռք բռնեցին, և յօժարակամ ձայնով սաղմոսին այս խօսքն ըսին. «Ի քեզ, Տէր, յուսացայ, մի՛ ամաչեցից յաւիտեան»։ Եւ կառքն դանդաղօրէն մեկնեցաւ յաքսորանս։

Շարայարելի

ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

(Տես Թիւ. ծզ. էջ 459)

Բաժանումն աշխատութեանց. — Գործաւէր մեղուներն կը բաժնեն իրենց մէջ աշխատութիւնները, ըստ յարմարութեան ընկերաց և հանգամանաց ժամանակին. անոնք որ կարող չեն մոմ կազմել, կ'երթան ծաղկաքաղ ընելու։ Բայց երբ առատ մեղր հաւաքելու ժամանակն գայ, ամէն գործաւէր մեղուք կ'երթան մեղր հաւաքելու։ Սովորական աւարառուք և ծեր մեղուներն չեն պաշտպանիր ի խնամս թրթրոց, և քիչ անգամ ի պահպանութիւն և ի մաքրութիւն փեթակի։

Մաքրութիւն փեթակի. — Ներքին աշխատաւոր մեղուներն կը պարապին ի մաքրութիւն փեթակի, վերցնելու և տանելու ամէն աղտեղութիւնները և դիակները. և ականամոմով պատելու այն թշնամեաց դիակները՝ զոր չեն կարող դուրս հանել, և որք մնալով կրնային հոտիլ և փեթակին օդը ապականել։

Փեթակին ներքին աղտեղութիւնները մաքրելու կամ աւլելու համար կը գործածեն իրենց թևերը, զորս կը շարժեն բոլորովին տարբեր կերպով քան երբ հարկ ըլլայ օդը փոխելու կամ բզզիւն հանելու համար։

Հովահարութիւն փեթակի. — Մեղուներն հարկաւորութիւն ունին իրենց բնակարանին օդը փոխելու և զովացնելու, սաստիկ տաքութեան ժամանակ։ Եւ կը տեսնենք յայնժամ, որ մանաւանդ ի մուտս դրան փեթակին և անոր առջևի տախտակին վրայ իրենց ոտքերուն ճանկերով կպած, անդադար կը շարժեն իրենց թևերը երագ երագ,

digitised by A.R.A.R.@

սաստիկ բզզիւն հանելով։ Այս հովահարող մեղուներն կը փոխանակեն զիրար․ իսկ առուներն չեն կատարեր այդ պաշտօնը։

Դռնապան փեթակի․ — Գործաւոր մեղուներն անդադար պահպանութիւն կ'ընեն փեթակին դրան առջև՝ ամբողջ գեղեցիկ եղանակին մէջ։ Այցելութիւն կ'ընեն մեղուաց՝ որք ներս կը մտնեն, և երբեմն կը ստիպեն աւարառութենէ դարձող մեղուները տալ իրենց՝ բերած մեղրը։ Պահապաններն կը մերժեն ամէն միջատներն և օտար մեղուներն՝ որք կը ջանան ներս մտնել․ և երբ թշնամի մը մօտենայ և մօտալուտ վտանգ մը ըլլայ ամբողջ մեղուաց խմբին, կը սկսին սուր ձայնով չչել և օգնութիւն կանչել։ Այն մեղուներն որ ի պահպանութիւն սահմանեալ են, կը փոխուին երբեմն երբեմն։

Խնամք ի վերայ ձագուց մեղուաց (*)․ — Գործաւէր մեղուաց մի մասը կը պարապի ի խնամս ձագուց, ի ձուոյ սկսեալ մինչև ի կատարեալ վիճակ միջատի։ Այս ժամանակը կը բաժնուի չորս պահ․ առաջնոյն մէջ կ'ըլլայ թխումն․ երկրորդին մէջ ձուն բացուելով որդան ծնանիլն․ երրորդին մէջ որդան փոխարկիլն ի հարսնուկ․ չորրորդին մէջ հարսնեկին դառնալն ի կատարեալ միջատ։

Այս բովանդակ միջոցին մէջ դայեակ մեղուաց ունեցած հոգը և խնամքը ձագուց վերայ մեծ է և անընդհատ, մատակարարելով իրենց հարկաւոր կերակուրը և ուրիշ պիտոյքը։

Դայեակ մեղուներն օգնութիւն մը չեն ըներ այն ձագուց, որ տկար ըլլալով չկարենան ինքնին պատռել իրենց վրայի պատեանը և դուրս ելնել, և կը թողուն այսպիսիները որ մեռնին։ Բայց պատեանէն դուրս ելնելէն վերջ կը փութան մաքրել անոնց վրայի աղտեղութիւնները իրենց խոզանակներով, բերել մեղր, և սովրեցընել անոնց՝ ինչ որ հարկաւոր է օգտակար ըլլալու համար իրենց ընտանեաց։

Մաքրութիւն բջիջներուն․ — Երբ որդունք կ'առնուն իրենց կատարեալ կերպարանափոխութիւնը և դուրս կ'ելնեն, յայնժամ տնարար մեղուներն կը մտնեն բջիջներուն մէջ՝ մաքրելու անոնց մէջի աղտեղութիւնները․ կը վերցնեն մէջէն ծածկարանին կտորակները և ուրիշ անպէտ նիւթերը, և կը թողուն միայն մետաքսեայ բարակ խորխը՝ որով ծածկած էր նորածին մեղուին մարմինը։ Այս խորխը կամ թաղթը այնչափ բարակ է, որ կը կպչի բջջին մոմակերտ կողերուն, և կու տայ անոնց հաստատութիւն։ Յետոյ դան ուրիշ մեղուներ և տան բջիջներուն բերնին վեցանկիւնի ձևը, որ պատեանով խանգարեալ էր։ Եւ յայնժամ պատրաստ կ'ըլլայ բջիջը նոր ձու ընդունելու, զոր պարսմայրը չի դանդաղիր դնելու։

Կատաղութիւն մեղուաց որք կը խնամեն ձագերը․ — Դայեակ մեղուաց գութը և սէրը այնչափ սաստիկ է ձագուց վրայ, որ իսկոյն կը կատղին դոյզն վտանգի մը առջև։ Եթէ փոքրիկ շառաչ մը լսեն իրենց բնակարանին մօտ, իսկոյն դուրս կ'ելնեն բազմաթիւ, իմանալու թէ ինչ վտանգ կը սպառնայ իրենց։ Եւ իրենց ձագերը պաշտպանելու համար, յանձն առնլով իրենց կենաց վտանգը, կը յարձակին խայթոցով, և թշնամին խայթելէն ետև՝ կը թողուն շատ անգամ վէրքին մէջ իրենց խայթոցը, անոր հետ միացած գործարաններով, և իրենք կը մեռնին։ Ուստի պէտք է զգուշութեամբ մօտենալ մեղուաց քով և չնեղել զիրենք՝ երբ շատ ձագ ունենան։

Նուիրումն մեղուաց իրենց մօր համար․ — Որովհետև մայր մեղուի էութեան վրայ կայացեալ է բովանդակ պարսին պահպանութիւնը, ամէն գործաւոր մեղուք պատրաստ են զոհել իրենք զիրենք զինքը պաշտպանելու համար․ և շատ անգամ կը զոհեն իսկ փոքր վտանգի մը առջև։ Այս նուիրումը կրնամք օգտակարի գործածել՝ երբ փեթակի մը մէջ հարկ ըլլայ աշխատիլ։ Վասն զի բաւական է յայնժամ զիրենք այն վիճակին մէջ դնել, որ իրենք իրենցմէ համոզուին թէ ընդունայն է իրենց ամէն հարուածը՝ իրենց մայրը վտանգէ ազատելու համար․ և չխնար իրենց այլ ինչ, բայց պաշտպանել իրենց մօրը հեռանալը․ որով և կարող կ'ըլլամք ընել փեթակին մէջ ինչ որ հարկաւոր է առանց վախնալու անոնց խայթոցէն։

Ձու մեղուաց․ — Մեղուաց ձուերն են ձուարդ, երկայնաձև, քիչ մը կոր, ճերմակ կապտորակ, և իբր $1\frac{1}{2}$ հազարորդամետր երկայնութեամբ։ Մեծագոյն մասն բջջաց ձագարանին լցեալ են ձուովք։ Այս ձուերն ինքիրեն կը ճեղքին փեթակին տաքութեամբ, որ կ'անցնի 30 աստիճան հարիւրամասն ջերմաչափի։

Մայր մեղուին առաջին հոգն է քննել բջիջն՝ ուր պիտի ածէ ձու, թէ մաքուր և յարմա՞ր է ընդունելոյ զձու․ յետոյ կը դառնայ հոն և իր յետակողմն կը մցնէ ներս․ և այդ դիրքի մէջ քանի մը բոպէ կենալէն ետքը կ'ածէ հոն ձու մը, որ կը փակչի բջջին ստորին անկեան վրայ մածան նիւթով

(*) Couvain, Ձագ ծնունդ․ է զանազան վիճակ մեղուի ի ձագարանի, ի ձուոյ մինչև ի կատարեալ փոխարկութիւն նորա ի միջատ։

digitised by A.R.A.R.@

մը, և յետոյ կը մեկնի. և այսպէս հետզհետէ կ'ածէ հարիւրաւոր ձու գարնան մէկ օրուան մէջ։ Ձու ածելուն չափը կախումն ունի կերակրոյ առատութենէն, և գլխաւորապէս բեղնոյ, մեղուաց խմբին բազմութենէն, մայր մեղուին հասակէն և տեսակէն, ջերմութեան աստիճանէն և տարւոյն եղանակէն։

Մայր մեղուն սովորաբար մի ձու կ'ածէ իւրաքանչիւր բջջին մէջ. բայց երբ կը փութայ ածելու, կը ձգէ երբեմն քանի մը հատ մի և նոյն բջջին մէջ։ Այս դէպքիս մէջ, մեղուներն կը հանեն բջջէն աւելորդ ձուն և կ'ուտեն, և կը թողուն մի միայն։

Մայր մեղուն կորսընցունէ երբեմն իր ձուերն, այս ինքն, ինքնին դուրս կը թափին ձուերն և կ'ընկնին բջիջներուն մէջ կամ տախտակին վրայ. և այս կը պատահի՝ երբ կը փութայ ածելու, երբ զինքը կը բռնեն ձու ածելու ժամանակ, երբ մեղուներն չեն կազմեր փութով բջիջները, և երբ հիւանդ ըլլայ։

Մայր մեղուն կ'ածէ իր ձուերն երկու սեռէ ևս. կ'ածէ էգ կամ գործաւոր մեղուաց ձուեր այն բջիջներուն մէջ՝ որ իրենց համար շինուած են, և արու մեղուաց ձուեր՝ իրենց համար շինուած բջիջներուն մէջ։ Եւ սակայն իր ձուընկալ ամաններուն մէջ մի տեսակ են ձուերն, որք թէպէտ չեն ընդունած արուի բեղնաւորութիւն, սակայն ունին արուի և իգի սերմը։ Յայտ է տարբերութիւնը, որ արուի սերմը կարօտ չէ ապագայ բեղնաւորութեան. և այս բանիս համար է որ անբեղնաւորեալ մայրեր կը ծնանին միայն արու մեղուներ։ Ընդհակառակն, իգի սերմը կարօտ է մասնաւոր բեղնաւորութեան, զոր կ'ընդունի ըստ կամս մայր մեղուի, երբ անցնելով սերմնական փամփուշտին բերնին առջևէն՝ կը թրջի բեղնաւորիչ հեղկով։ Եւ այսպէս իգական սերմը աճումն առնլով, անհետ կ'ըլլայ արական սերմը։ Եւ հետևաբար, նոյն ձուն կը ծնանի արու մեղու, երբ չբեղնաւորի սերմնական փամփուշտէն. և կը ծնանի էգ, երբ բեղնաւորի։

Եւ երբ պարսմայրը յանզգաստից դնէ արուի ձու մը իգի բջջին մէջ, մեղուներն կը բարձրացնեն այս բջիջը, և կը դնեն վրան կմրաձև ծածկոյթ մը։ Այն բջիջէն ելած արուն քիչ մը մանր կ'ըլլայ։ Մայրը յօժարութեամբ կ'ածէ արուի ձուեր գործաւորաց բջիջներուն մէջ, երբ մեծ բջիջներն անբաւական են. և այս կը պատահի՝ երբ բազմաթիւ է ընտանիքը և փոքր է փեթակը։ Բայց երբ դիպուածով մայր մեղուն ձգէ գործաւորի ձու մը արուի բջջին մէջ, շուտով կը հանեն զայն գործաւորները և կը դնեն գործաւորի բջջին մէջ։

Ձու մը բջջին մէջ դրուելէն երեք օր ետքը՝ կը փոխակերպի և կը դառնայ Որդ, որ և կ'ըսուի Թրթուր։ Այլ եթէ տաքութիւնը բաւական չըլլայ, կրնայ ձուն մնալ մինչև եօթն կամ ութ օր առանց բացուելու։

Որդ կամ Թրթուր մեղուի. — Որդն կամ թրթուրն որ ձուէ կ'ելնէ, է ճերմակ, անոտն, կլորաձև, և կայ ի յատակ բջջին։ Որդունք՝ գրեթէ անշարժ կը կենան բջիջներուն մէջ, նաև երբ կը ծծեն կերակուրը՝ զոր կը բերեն իրենց դայեակ մեղուք։ Այս կերակուրն է խիւս մը՝ բաղկացեալ ի բեղնոյ և քիչ մը մեղրէ՝ խառնեալ ջրով. որոյ հանգամանքը կը փոփոխի ըստ հասակի որդան։ Ի սկզբան է ճերմակ և անհամ. և երբ աճի որդը, կ'ըլլայ աւելի մեղրահամ. և իր կերպարանափոխութեան վերջերը՝ կ'ըլլայ սառնորակ և թափանցիկ և շատ անոյշ։ Բջջին յատակը լցեալ է բովանդակ այս խիւսով, որոյ վրայ կը հանգչի որդը, այնպէս որ բերանը բանալով կրնայ ծծել նոյն նիւթէն։ Դայեակ մեղուներն ամենայն խնամով կը հոգան այս որդերը, կը բերեն անոնց կերակուրը որչափ հարկաւոր է, և շատ անգամ այցելութեան կ'ելնեն օրուան մէջ։

Եթէ եղանակը տաք ըլլայ, հինգ օր կը բաւէ որ որդը առնու իր կատարեալ աճումը։ Դայեակ մեղուներն գիտելով իր կերպարանափոխութեան վախճանը, կը դադրին կերակուր բերելէն, և կը գոցեն մոմով բջջին վրայ քիչ մը կմրաձև, որով կը տարբերի այն բջիջներուն ծածկարանէն՝ որոց մէջ դրուած են մեղր, և է տափարակ։ Որդը այս արգելանին մէջ կը սկսի հիւսել իր չորս կողմն մետաքսեայ փաթոյթ մը, կամ թէ ըսել բոժոժ մը. և երբ լմննայ, կը թողու իր վրայի մորթը և կերպարանափոխ կ'ըլլայ ի Հարսնուկ։ Կը կատարէ այս գործը երկու օրուան մէջ, գլորելով գլորտկելով բոժոժին մէջ դէպ ամէն կողմ՝ և կանգնելով։

Հարսնուկ. — Հարսնուկ կոչի միջատաց այն վիճակը զոր կ'առնու որդը յառաջ քան դառնալն ի կատարեալ միջատ։ Մեղուաց հարսնուկն է ճերմակ, կը տեսնուի մորթոյն տակէն կատարեալ միջատին արտաքին մասերը։ Իբր տասն օրուան մէջ մարմնոյն արտաքին մասերը կ'առնուն հաստատութիւն և զօրութիւն, և յայնժամ կը սկսի պատռել իր վրայի փաթոյթը. իր ակռաներով կըծակէ վրայի պատեանը, և անկէ դուրս կը հանէ իր գլուխը, և յետոյ առջևի ոտքերը և բովանդակ մարմինը։ Զօրաւոր մեղու մը քիչ ժամանակի մէջ դուրս կ'ելնէ այս արգելանէն, այլ տկար մեղու մը շատ ժամեր կ'անցընէ, և երբեմն ալ կը մեռնի այս գործողութեան ժամանակ։

digitised by A.R.A.R.@

Կերպարանափոխութիւն գործաւոր մեղուաց. — Գործաւոր մեղու մը ձուէ մինչեւ ի կատարեալ կերպարանափոխութիւն՝ կ'անցընէ իննեւտասն կամ քսան եւ մի օր ըստ աստիճանի տաքութեան փեթակին։ Այն որ կը ծնանի քսան եւ մի օրուան մէջ, կը կենայ երեք օր ձուոյ կերպարանօք, հինգ օր որդան կերպարանօք, երկու օր կը պարապի հիւսել իր վրայի մետաքսեայ բոժոժը, եւ կը կենայ իբր տասն օր հարսնուկի կերպարանօք։ Այս այլեւայլ կերպարանաց միջոցը կրնայ քիչ մը կարճիլ կամ երկարիլ։

Կերպարանափոխութիւն արու մեղուաց. — Արու մեղուներն կրեն զնոյն կերպարանափոխութիւն, բայց կ'անցնեն քսանեւչորս օր։ Կը կենան երեք օր ձուոյ կերպարանօք, վեց օր որդան կերպարանօք, երեք օր կը պարապին հիւսել իրենց բոժոժը, եւ տասներկու օր հարսնուկի կերպարանօք։ Երբեմն արուներն կը ծնանին քսանեւվեց կամ քսանեւեօթն օրուան մէջ։

Դայեակ մեղուներն նոյն խնամքը կ'ընեն նաեւ նորածին արու մեղուաց՝ ինչ որ կ'ընեն գործասէր մեղուաց վրայ, անդադրին ի ձուոյ մինչեւ ի կատարեալ կերպարանափոխութիւն։

Կերպարանափոխութիւն մայր մեղուի. — Մայր մեղուն կը կենայ երեք օր ձուոյ կերպարանօք, հինգ օր որդան կերպարանօք, եւ յետոյ կը սկսի հիւսել իր ոստայնը. բայց որովհետեւ իր բջիջը երկայն է, ուստի իր բոժոժն չի կրնար հասնիլ մինչեւ ի յատակն, եւ կը թողու անկատար այդ աշխատութիւնը յատակին մօտ. եւ այդ աշխատութեան համար կ'անցնէ քսանեւչորս ժամ. յետոյ երկու օր եւ քանի մը ժամ հանգիստ կենալէն վերջ կը դառնայ ի հարսնուկը. եւ չորս օրէն ետքը կ'առնու կատարեալ միջատի կերպարան իգի, անցնելով ձուոյ կերպարանէն մինչեւ ի կերպարան կատարեալ միջատի տասնեւհինգ կամ տասնեւվեց օր։ Բայց երբեմն հարսնուկի վիճակի մէջ աւելի երկայն ժամանակ կը կենայ։

Նորածին էգ միջատին կերակուրը տարբեր է գործասէր եւ արու մեղուաց կերակուրէն. ի սկզբան է աւելի թթու, յետոյ աւելի անոյշ եւ առատ։

Նոյնութիւն ձուոց մայր մեղուաց եւ գործասէր մեղուաց. — Մայր մեղուին ձուն ամենեւին չի տարբերիր գործասէր մեղուին ձուէն. եւ հետեւաբար գործասէր մեղուի մը ձուն կրնայ տալ մայր մեղու մը՝ եթէ դրուի մասնաւոր բջջի մէջ, եւ հոն ծնած որդը մասնաւոր կերակուր ունենայ։ Որով եւ յայտնի կ'ըլլայ, թէ ամէն գործաւոր մեղուք են էգ, եւ կրնային դառնալ ի մայր մեղու, եթէ իրենց կերակուրը եւ բնակարանը այլ օրինակ ըլլար։ Եւ միացին ամուլ, որովհետեւ բջջին անձկութեան պատճառաւ իրենց ձուընկալ ամանը կը ճնշի որդան կերպարանաց ժամանակ. եւ զի չունեցան այն մասնաւոր կերակուրը՝ որ կը տրուի մայր մեղուի որդան։ Կերակրոյ տարբերութիւնը մեծ ազդեցութիւն ունի թրթուրին վրայ. կ'արագէ իր աճումը եւ կ'ընդարձակէ ձուընկալ ամանը։ Այս ազդեցութիւնը այնչափ զգալի է, որ եթէ դայեակ մեղուք ունենան առատութեամբ այդ կերակրէն եւ տան թրթրոց գործաւոր մեղուաց, այդ մեղուաց ձուընկալ ամանը այնչափ կ'ընդարձակի՝ որ կարող կ'ըլլան ձու ածել, բայց կ'ածեն միայն արուի ձուեր։ Եւ սակայն բարեկարգ փեթակի մը մէջ դժուարաւ կրնան ածել, որովհետեւ մայր մեղուն կը պատերազմի իրենց հետ եւ կը սպաննէ զիրենք։

Ձու կամ որդն գործաւորաց փոխակերպեալ ի կատարեալ էգ. — Գործաւոր մեղուի որդ մը՝ որ դեռ կատարեալ փոխակերպութիւն առած չէ, կրնայ դառնալ յէգ կատարեալ։ Երբ մեղուներն ուզեն գործաւորի թրթուր մը դարձնել ի թրթուր մայր մեղուի, որ կը պատահի երբ մեռնի մայր մեղուն, կը մեծցնեն նորա բջիջը աւրելով մօտակայ բջիջները, եւ տալով ուրիշ ուղղութիւն մը մեծցուցած բջջին. եւ յետ այնորիկ կը մատակարարեն վերոյիշեալ ծննդական խիւսը. եւ այս թրթուրը կը կատարէ մայր մեղուի կերպարանափոխութիւնը։ Ձու ածելէն տասնեւհինգ կամ տասնեւվեց օր ետքը՝ կը ծնանի մայր մեղու մը, որ կոչի Մայր արտահատական, որ ունի ճշդիւ նոյն հանգամանքը՝ ինչ որ ունի բնական պարմայրը, որ ծնած ըլլայ այն ձուէն՝ որ ածուած է մասնաւոր բջջի մէջ։

Էգ բանտարկեալ բջջին մէջ. — Ըսինք թէ էգը կ'առնու իր կատարեալ կերպարանափոխութիւնը տասնեւհինգ կամ տասնեւվեց օրուան մէջ, բայց երբեմն կ'երկարի մինչեւ քսանեւչորս օր եւ աւելի, երբ բանտարկեալ ըլլայ գործաւորներէն, որք կ'ամրացնեն բջջին ծածկարանին եզերքը, եւ չեն թողուր որ դուրս ելնէ, մինչեւ որ իրենց կամքը չըլլայ։ Քիչ անգամ կը պատահի որ ութ օրէն աւելի տեւէ այս բանտարկութիւնը. եւ ցորչափ տեւէ, որորանին պահապաններն կը բանան փոքրիկ ծակ մը ծածկարանին վրայ, ուսկից կրնայ բանտարկեալը անցնել իր պատիճը եւ առնուլ զմեղր՝ զոր դայեակ մեղուներն կը ներկայացնեն իրեն ուտելու համար։

Այսպիսի բանտարկեալ էգ մը երբ դուրս ելնէ իր բջջէն, կրնայ իսկոյն թռչիլ եւ բեղ-

digitised by A.R.A.R.@

նաւորիլ. մինչդեռ այն որ բանտարգել եղած չէ և կը ծնանի տասնևվեց օրուան մէջ, կրնայ թռչիլ երկու կամ երեք օրէն, և բեղնաւորիլ իր ծննդենէն վեց կամ եօթն օր ետքը:

Երգ իգլի. — Բանտարկեալ էգը տեսակ մը ձայն կը հանէ բջջին մէջէն՝ որ կոչի երգ. և կը լսուի այն փեթակներուն մէջէն՝ որ պիտի տան երկրորդական պարսեր. և ամէն անգամ որ լսուի այդ երգը, անհանգիստ կ՚ըլլան մեղուներն և իսկոյն կը լռեն: Այդպիսի ձայն մը կը հանեն եւ իրենցմէ ծնած էգերն ալ, կանչելով թիր, թիր, թութ. մինչդեռ բանտարկեալներն կը կանչեն սովորաբար քուա, քուա: Խիստ քիչ անգամ կը պատահի որ բեղնաւորեալ մայրերն երգեն. և յայնժամ միայն կը բարձրացնեն իրենց ձայնը, երբ կը ստիպուին և հեռացեալ են իրենց բնակարանէն:

Մայր մեղուի տարիքին ազդեցութիւնը ձու ածելու եւ գաղթականութեանց համար. — Մայր մեղուն, ինչպէս ըսինք ուրիշ տեղ, կրնայ ապրիլ չորս կամ հինգ տարի: Առաջին երկու տարիներն են իրեն մեծագոյն բեղնաւորութեան տարիներ: Այդ հասակին մէջ աշխոյժ է, փայլուն, ոսկեգոյն, մանաւանդ փորին առաջին մանեակները. և կռուոյ ժամանակ աւելի զօրաւոր կը գտնուի քան զծերերը: Չորս կամ հինգ տարեկան հասակին մէջ չէ այնչափ աշխոյժ և զօրաւոր, և գրեթէ կ՚ըլլայ անբեղնաւոր: Իր կուրծքին վրայի մանր մազերուն շատերը թափած կ՚ըլլան, գոյնը կը սևնայ, հասակը կը կարճի և թևերը կը պատռտին:

Այն գաղթականութիւններն՝ որոց մայրը ծեր է՝ կը կորնչին, որովհետև մայրը անկարող է ձու ածել: Ուստի հարկ է որ մանկահասակ մայր ունենան, և հետևաբար ծերերուն տեղ մանկահասակ մայրեր փոխանակել:

Հ. Մ. Քաջունի

ԵՒՐՈՊԻՈՅ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՔ

Եւրոպական պետութեանց մէջ ամենէն աւելի բազմաթիւ մատենադարան և գրեանք ունեցող առաջին տէրութիւնն է Աւստրիա. ունի 577 մատենադարան և 5,475,738 հատորներ, ի բաց առեալ քարտէսները և ձեռագրերն: Երկրորդն է Գաղղիա, ունի 500 մատենադարան և 4,538,100 հատորներ, և 135,300 ձեռագիրք: Երրորդն է Իտալիա, 493 մատենադարան և 4,439,281 հատորներ, իսկ ձեռագիրք 330,570: Չորրորդն է՝ Պրուսիա, ունի 398 մատենադարան և 2,640,250 հատորներ, ձեռագիր 58,000: Հինգերորդն Անգլիա, 200 մատենադարան և 2,871,493 հատորներ, իսկ ձեռագիր 26,000: Վեցերորդն Բաւիերա, ունի 169 մատենադարան և 1,368,500 հատորներ, իսկ ձեռագիրք 23,000: Եօթներորդն Ռուսիա, ունի 145 մատենադարան և 952,000 հատորներ, իսկ ձեռագիր 24,300:

Իսկ առանձին առնլով կաճառները (Instituts), Գաղղիոյ Ազգային մատենադարանն որ ամենէն աւելի մեծն է, կը բովանդակէ 2,078,000 հատորներ: Լոնդրայի Բրիտանական թանգարանն (British-Museum) մէկ միլիոն հատոր: Մոնակոյի արքունի մատենադարանն 800,000: Բերլինին 700,000: Դրեզդային 500,000: Վիեննային 420,000: Օքսֆորդի Համալսարանին՝ յԱնգղիա 300,000. իսկ Կիգելբերգինն ի Գերմանիա 300,000: Վատիկանի մատենադարանն ի Հռովմ՝ ունի 30,000 հատորներ, բայց ձեռագրաց մասին ամենէն ճոխն է, որոց թիւն կը հասնի 25,000:

digitised by A.R.A.R.@